CSOsNet. Համայնքահեն կազմակերպությունների համագործակցության հայտարարություն-հուշագիր

1. Ընդհանուր դրույթներ և իրավական կարգավիճակ

Սույն հայտարարությունը սահմանում է «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի և մի շարք համայնքահեն կառույցների կողմից նախաձեռնված ոչ ֆորմալ ցանցի (այսուհետ՝ Ցանց) գործունեության սկզբունքները: Ցանցը չունի իրավաբանական անձի կարգավիճակ և գործում է կամավորության ու փոխադարձ շահի հիման վրա: Այն հանդիսանում է հարթակ՝ ուղղված քաղաքացիական հասարակության էկոհամակարգի զորեղացմանը և սոցիալական կայուն փոփոխությունների խթանմանը՝ ի նպաստ կայուն և ներառական զարգացման:

2. Ցանցի ռազմավարական նպատակներն ու խնդիրները

2.1. Քաղաքացիական դիմակայունության և ինստիտուցիոնալ կենսունակության ամրապնդում

Ռեսուրսների համատեղ օգտագործում. Ստեղծել մեխանիզմներ, որտեղ անդամները կիսում են ոչ նյութական ակտիվները՝ մեթոդաբանություններ, հաշվապահական և իրավական ձևանմուշներ, փորձագիտական բազա և այլ ձևաչափեր և տեղեկատվություն՝ ըստ անհրաժեշտության:

Կազմակերպական աճի մենթորություն. Ապահովել գիտելիքի փոխանցում փորձառու կազմակերպություններից նորաստեղծ խմբերին՝ նվազեցնելով վերջիններիս կազմալուծման ռիսկերը:

Ճգնաժամային կառավարում. Մշակել փոխօգնության արագ արձագանքման մոդելներ՝ արտակարգ իրավիճակների կամ սոցիալական բարդ խնդիրների առաջացման դեպքում:

2.2. Հավաքական շահերի պաշտպանություն և համակարգային ազդեցություն

Մասնակցային ժողովրդավարության խթանում. Միավորել անդամների ջանքերը ՏԻՄ որոշումների կայացման գործընթացում բնակիչների ձայնը լսելի դարձնելու և «Քաղաքացիական գրագիտության» բարձրացման ուղղությամբ:

Օրենսդրական բարեփոխումների նախաձեռնում. Ցանցի միջոցով վերհանել համայնքային խնդիրները և ներկայացնել համակարգային լուծումների առաջարկներ պետական մարմիններին:

Միասնական հաղորդակցություն. Ստեղծել հանրային իրազեկման հզոր ալիք, որը կապահովի համայնքահեն նախաձեռնությունների տեսանելիությունը միջազգային հարթակներում:

2.4. Սոցիալական ներառականության և մարդակենտրոնության խթանում

Խոցելի խմբերի հզորացում. Ապահովել կանանց, երիտասարդների, տեղահանված անձանց և այլ խոցելի խմբերի ներկայացվածությունն ու ակտիվ դերակատարությունը Ցանցի բոլոր ծրագրերում:

Մարդակենտրոն ծառայությունների մշակույթ. Աջակցել անդամներին՝ վերափոխել իրենց համայնքային ծառայությունները՝ դրանք դարձնելով առավել թիրախային, որակյալ և շահառուի կարիքներից բխող:

3. Անդամակցության փոխադարձ արժեքը և ռեսուրսների համատեղում

Ցանցի կենսունակությունը հիմնված է «Ռեսուրսների փոխանակման մոդելի» վրա, որտեղ ֆինանսական ներդրումները փոխարինվում են մասնագիտական կապիտալով և փոխադարձ աջակցությամբ:

3.1. Անդամակցությունից բխող առավելությունները

Անդամ կազմակերպությունները և նախաձեռնող խմբերը ստանում են.

Ինստիտուցիոնալ վստահելիության երաշխիք. Ցանցին անդամակցությունը հավաստում է կազմակերպության համապատասխանությունը թափանցիկության և էթիկայի ստանդարտներին, որոնք սահմանված են սույն փաստաթղթի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ում՝ Հռչակագրում[1], ինչը բարձրացնում է անդամի վստահելիությունը միջազգային դոնորների և պետական գործընկերների մոտ:

Ռեսուրսային հասանելիություն և ինտելեկտուալ բազա. Մուտք դեպի Ցանցի մասնագիտացված գրադարան (ծրագրային հայտերի նմուշներ, ռազմավարական պլաններ, իրավական ուղեցույցներ), որոնց ինքնուրույն մշակումը կպահանջեր զգալի ֆինանսական միջոցներ:

Արտոնյալ տեղեկատվական հոսք. Դրամաշնորհային ծրագրերի, կրթական հնարավորությունների և օրենսդրական փոփոխությունների մասին օպերատիվ իրազեկում:

Համատեղ ծրագրերի ավելի լայն հնարավորություններ. Անհրաժեշտության և անդամների նախաձեռնության դեպքում՝ դրամաշնորհային հայտերի ներկայացում կոնսորցիումների տեսքով: Սա թույլ կտա ցանցի գործընկերներին միավորել սեփական փորձն ու ռեսուրսները, ինչը զգալիորեն կմեծացնի խոշոր ֆինանսավորում ստանալու հավանականությունը և կբարձրացնի անդամների մրցունակությունը:

3.2. Անդամի հանձնառությունները և ներդրումը

Ցանցի զարգացման համար յուրաքանչյուր անդամ ստանձնում է հետևյալ ներդրումները.

Փորձագիտական ներդրում. Ցանցի այլ անդամներին սեփական հաջողված փորձի, մեթոդաբանության կամ «քաղված դասերի» ներկայացում:

Տեղեկատվական գործընկերություն. Համայնքային կարիքների, սոցիալական խնդիրների և տեղական իրավիճակի վերաբերյալ տվյալների տրամադրում՝ Ցանցի հավաքական հետազոտությունների և շահերի պաշտպանության հիմքերը ստեղծելու համար:

Գործառնական ներգրավվածություն. Պարբերական մասնակցություն Ցանցի ռազմավարական հանդիպումներին և թեմատիկ կլաստերների աշխատանքներին:

[1] https://docs.google.com/document/d/16lot8dGYgH7z-0G19U_cpWPXYoHb2Ta5kMdgGagRjn0/edit?usp=sharing

Հավաքական ազդեցության աջակցություն. Ցանցի կողմից նախաձեռնված հանրային արշավների, հայտարարությունների և շահերի պաշտպանության գործողությունների տարածում տեղական մակարդակում:
Էթիկական համապատասխանություն. Իր գործունեության մեջ բացառել Ցանցի հեղինակությանը վնասող ցանկացած գործողություն՝ պահպանելով քաղաքացիական հասարակության բարեվարքության կանոնները:

4. Կառավարման մոդել
Ցանցը գործում է առանց հիերարխիկ աստիճանների՝ նպատակ ունենալով ապահովել առավելագույն ճկունություն և անդամների միջև անմիջական կապ:
4.1. Համակարգող և ռեսուրսային հանգույց
ՀԿ Կենտրոնը ստանձնում է Ցանցի կայունության երաշխավորի և ֆասիլիտատորի դերը.
Թվային ենթակառուցվածք. Ապահովում է միասնական հաղորդակցության հարթակը և տեղեկատվական շտեմարանը:
Հնարավորությունների գեներացում. Դոնորների և միջազգային գործընկերների հետ բանակցություններում ներկայացնում է Ցանցը որպես մեկ միասնական ուժ՝ ստեղծելով նոր ծրագրային հնարավորություններ անդամների համար:
Որակի և էթիկայի պահպանում. Իրականացնում է անդամների ընդունելությունը և հետևում, որ Ցանցի ներսում փոխհարաբերությունները հիմնված լինեն մասնագիտական բարեվարքության վրա:

4.2. Անդամների ուղիղ համագործակցություն
Ցանցի ներսում որոշումները և գործողությունները ստեղծվում են անդամների ուղիղ նախաձեռնությամբ.
Ազատ նախաձեռնողականություն. Ցանկացած անդամ կարող է հանդես գալ առաջարկով կամ հարցադրմամբ, որին արձագանքում են ըստ հետաքրքրվածության: Սա բացառում է մարդկանց ներգրավումը իրենց համար ոչ արդիական քննարկումներում:
Փորձի ուղիղ փոխանակում. Անդամները հաղորդակցվում են հորիզոնական հարթակում՝ առանց միջնորդների: Եթե մեկն ունի խնդիր, իսկ մյուսը՝ լուծում, համագործակցությունը տեղի է ունենում անմիջապես:
Հավաքական որոշումներ. Ռազմավարական հարցերը քննարկվում և հաստատվում են Ցանցի բոլոր անդամների մասնակցությամբ՝ կոնսենսուսի սկզբունքով:

5. Ցանցին միանալու կարգը և սկզբունքները
Ցանցին անդամակցությունը հիմնված է բաց համագործակցության սկզբունքի վրա: Կազմակերպությունը դառնում է Ցանցի լիիրավ անդամ սույն Հուշագիրը ստորագրելու պահից՝ Համակարգողի հաստատման նամակը ստանալուց հետո:

5.1. Գործունեության ընդգրկույթը
Ցանցը միավորում է քաղաքացիական հասարակության տարբեր դերակատարների, որոնց գործունեությունը միտված է հանրային բարօրությանը և համայնքային կյանքի որակական փոփոխություններին:

Սա ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալ ուղղություններով.

- Համայնքային զարգացում և տեղական ժողովրդավարություն,
- Սոցիալական ձեռնարկատիրություն և տնտեսական հզորացում,
- Կրթություն, մշակույթ և երիտասարդական նախաձեռնություններ,
- Մարդու իրավունքներ, ներառականություն և սոցիալական պաշտպանություն,
- Բնապահպանություն և աղետների ռիսկի կառավարում,
- Ցանկացած այլ ոլորտ, որն ուղղված է համայնքային դիմակայունության ամրապնդմանը և քաղաքացիական ակտիվության խթանմանը։

5.2. Միացման գործընթացը

Միացումն իրականացվում է առավելագույնս պարզեցված ընթացակարգով.

Կազմակերպությունը ծանոթանում է սույն Հուշագրի դրույթներին և ուղարկում ստորագրված հուշագիրը Համակարգողին։

Համակարգողը (ՀԿ Կենտրոն) դիտարկում է հայտի համապատասխանությունը Ցանցի սկզբունքներին և տալիս է իր հաստատումը։ Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է լրացուցիչ մասնագիտական դիտարկում կամ կա լրացուցիչ կարծիքի կարիք, Համակարգողը կարող է հայտի քննարկմանը ներգրավել Ցանցի այլ անդամների (Խորհրդակցական կարգով)։

Կազմակերպությունը համարվում է Ցանցի անդամ Համակարգողի կողմից հաստատում ստանալու պահից։ Հաստատումից հետո Համակարգողն ապահովում է նոր անդամի մուտքը հաղորդակցության հարթակներ ու ռեսուրսների շտեմարան և ներկայացնում վերջինիս Ցանցի մյուս գործընկերներին։

6. Անդամակցության դադարեցման հիմքերը և կարգը

Ցանցին անդամակցությունը կարող է դադարեցվել հետևյալ հիմնական դեպքերում, որոնք ուղղված են հարթակի արդյունավետության և բարեվարքության ապահովմանը.

6.1. Կամավոր դուրս գալու սկզբունք

Ցանկացած անդամ կազմակերպություն կամ նախաձեռնող խումբ իրավունք ունի ցանկացած պահի դադարեցնել իր անդամակցությունը Ցանցին՝ այդ մասին նախապես (առնվազն 1 ամիս շուտ) գրավոր տեղեկացնելով Համակարգողին (ՀԿ Կենտրոնին)։ Այս գործընթացը չի ենթադրում որևէ իրավական կամ ֆինանսական հետևանք և հիմնված է կամավորության սկզբունքի վրա։

6.2. Մասնագիտական էթիկայի և հեղինակության պաշտպանություն

Անդամակցությունը կարող է դադարեցվել Ցանցի անդամներից որևէ մեկի նախաձեռնությամբ, եթե անդամակցության դադարեցմանը կողմ են արտահայտվում Ցանցի անդամների կեսից ավելին և, եթե տվյալ կազմակերպության կամ խմբի գործողությունները.

Հակասում են Ցանցի արժեքներին. Քարոզում են խտրականություն, կուսակցականացված են կամ չեն պահպանում քաղաքացիական հասարակության բարեվարքության սկզբունքները։

Չարաշահում են Ցանցի անունը. Ցանցի անունը/տարբերանշանը կամ հեղինակությունը օգտագործվում է սեփական շահադիտական նպատակներով կամ առանց համաձայնեցման ներկայացվում են ոչ հավաստի տվյալներ Ցանցի անունից։

Վնասում են վստահությանը. Ակնհայտ անհարգալից վերաբերմունք են դրսևորում Ցանցի այլ անդամների կամ գործընկերների նկատմամբ։

6.3. Գործառնական պասիվություն

Քանի որ Ցանցի հիմքում ընկած է ռեսուրսների և փորձի փոխանակումը, երկարատև պասիվությունը հանգեցնում է անդամակցության վերանայման։

Եթե անդամը 2 տարի շարունակ, առանց հարգելի պատճառի, չի ցուցաբերում որևէ մասնակցություն Ցանցի հավաքական գործընթացներին (քննարկումներ, տվյալների փոխանակում, փոխօգնության հարցումներ), նրա անդամությունը դադարեցվում է։

6.4. Դադարեցման ընթացակարգը

Անդամակցության դադարեցման վերաբերյալ որոշումը կայացվում է Համակարգողի կողմից՝ խորհրդակցելով Ցանցի այլ անդամների հետ (ըստ անհրաժեշտության), հիմնավորված փաստարկների հիման վրա։ Կազմակերպությանը նախապես տրվում է հնարավորություն ներկայացնելու իր պարզաբանումները։

Միացման հավաստում

Սույնով մեր կազմակերպությունը հայտնում է իր համաձայնությունը միանալու Համայնքահեն կազմակերպությունների համագործակցության ցանցին և պարտավորվում է առաջնորդվել սույն Հայտարարություն-հուշագրում շարադրված նպատակներով ու սկզբունքներով։

Մենք ընդունում ենք, որ Ցանցին անդամակցությունը հիմնված է փոխադարձ վստահության, ակտիվ ներգրավվածության և էթիկայի նորմերի պահպանման վրա։

Կազմակերպության անվանում՝ _____

_____

Լիազորված անձ՝ _____

Պաշտոն՝ _____

Ստորագրություն / Կնիք _____

Ամսաթիվ՝ «__» _____ 20__ թ.